ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«20» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-48/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-113-րդ կետերով՝ հայտնում ենք հետևյալը.

1. **«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 03.05.2016թ. ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Կենտրոն) հայտնել է, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ահազանգող) 17.03.2016թ. ժամը 17:25-ին ահազանգել է Կենտրոնի թեժ գծին և հայտնել, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական նշանակության ապրանքների և

նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ԾՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն: «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թվով 32 չափաբաժինների մասով և ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, որի արդյունքում՝ վերոհիշյալ չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի արձանագրության 3-րդ կետի համաձայն որոշել է պահանջել «Ալմաքսիմս» ՍՊԸ-ից ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով պահանջված փաստաթղթերը, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած բոլոր չափաբաժիններով առաջարկած գների պարզաբանումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2016թ. ժամը 12:00-ի N 7 արձանագրության համաձայն՝ Ընկերությանը տրամադրվել է 1 աշխատանքային օր՝ ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես՝ նախկինում կնքված համանման (նմանատիպ) պայմանագրերում և գնային առաջարկները հիմնավորող փաստաթղթերում առկա անհապատասխանությունները շտկելու նպատակով:

Ահազանգողը գտնում է, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ խնդրելով, որպեսզի Պատվիրատուի կողմից վերանայվի գնահատող հանձնաժողովի N 7 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 21.03.2016թ N 08-96 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 2 որոշմամբ թվով 32 չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցնող է ճանաչվել «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն, որից սահմանված կարգով պահանջվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև հրավերի 7.5 կետով նախատեսված գնային առաջարկի հիմնավորումները՝ առաջին տեղը զբաղեցրած բոլոր չափաբաժիններով, քանի որ մասնակցի առաջարկները նշված բոլոր չափաբաժիններով նվազ են նախահաշվային գնի 75 տոկոսից: Սակայն մասնակիցը չի ներկայացրել ըստ չափաբաժինների գնային առաջարկը հիմնավորող փաստաթուղթ, այլ ներկայացրել է ընդհանրացված նամակ, որը չի ապահովում բոլոր չափաբաժիններով ցածր գնի արժանահավատությունը, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի

ներկայացրած փաստաթղթերի բոլոր անհամապատասխանությունները հրավերի պահանջներին արձանագրել է և ներկայացրել է մասնակցին:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2016թ. N 8 արձանագրության համաձայն՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն անհամապատասխանությունները շտկելու համար նախատեսված ժամկետում ներկայացրել է որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, որոնք սակայն լիովին չեն շտկում անհամապատասխանությունները, մասնավորապես՝

1.ամփոփելով հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված պայմանագրերը՝ հանձնաժողովը գտնում է, որ մասնակիցը, համաձայն ներկայացված փաստաթղթերի, պատշաճ իրականացրել է երեք պայմանագրեր, որոնց շրջանակներում մատակարարված ապրանքների գումարային ծավալը կազմում է 94.697.000 ՀՀ դրամ: Այնինչ, Ընկերությունը հայտով ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է 990.175.000 ՀՀ դրամի մատակարարման պայմանագրեր և պարտավորվել էր ներկայացնել դա հիմնավորող փաստաթղթերը:

2. մասնակիցը կրկին անգամ չի ներկայացրել ըստ չափաբաժինների գնային առաջարկները հիմնավորող փաստաթղթեր, այլ ներկայացրել է ներկայումս այլ ընկերությանը մատակարարվող թվով երկու ընտրանքային հաշիվ ապրանքագրեր՝ գնային հիմնավորման վերլուծության համար: Նշված հաշիվ ապրանքագրերում արտահայտված են սույն գնման Ընթացակարգի հրավերի 80, 81 և 82-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, սակայն դրանցում վաճառքի գինը մեկ միավորի համար բոլոր երեք ապրանքներով էականորեն նվազ է քան «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2016թ. ժամը 16:00-ի N 8 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը քննության առնելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից ստացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, այն համարել է ոչ բավարար և մերժել է Ընկերության հայտը, քանի որ Ընկերությունը հրավերի 8.1.5 կետի պահանջների համաձայն՝ չի ներկայացրել ըստ չափաբաժինների գնային առաջարկը հիմնավորող փաստաթուղթ, ինչպես նաև Ընկերությունը չի ներկայացրել հայտը ներկայացնելու

տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած 990.175.000 ՀՀ դրամի մատակարարման պայմանագրեր, որոնք պարտավորվել էր ներկայացնել հայտով ներկայացրած հայտարարության հիման վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա ***պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝*** մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝ որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ ***հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգ 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի

կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: **Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:**

Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից***, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:***

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն, ի լրումն 17.03.2016թ. ներկայացրած ահազանգի, 05.04.2016թ. N 19/1-2016/04 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն շրջանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ. N 168-Ն որոշման 15-րդ և 16-րդ կետերի պահանջները: Նշելով, որ Պատվիրատուի գնումների պլանը կազմված չէ՝ ըստ գնման առարկայի, քանակի, գնման ձևի, անկախ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն գնում կատարելու հանգամանքից:

Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանում «Գնման առարկայի անվանումը» սյունակում լրացված է «Բուժ սարքավորումներ, գործիքներ, լաբորատոր ախտորոշիչ նյութեր և բժշկական նշանակության այլ ապրանքներ», իսկ «Գնման առարկայի միջանցիկ կոդը» սյունակում՝ 33000000:

Գնումների միասնական անվանացանկում նշված միջանցիկ կոդը՝ 33000000, համապատասխանում է գնման առարկաների «Բժշկական սարքեր, դեղեր և անձնական հիգիենայի պարագաներ» բաժնի միջանցիկ կոդին, որը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից գանումների պլանում 33000000 միջանցիկ կոդի դիմաց լրացված գնման առարկաների անվանման հետ:

Կարգի 14-րդ կետի համաձայն՝ Գնումների պլանի ձևը և դրա լրացման ու հրապարակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը, իսկ գնումների միասնական անվանացանկի բացվածքը՝ ըստ թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի, խմբերի, դասերի և դասակարգիչների սահմանում և տեղեկատուում հրապարակում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելված 2-ով սահմանված կարգի 3-րդ կետի համաձայն՝ «Գնման առարկայի «Միջանցիկ կոդը» և «Անվանումը» սյունակներում լրացվում է Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված գնումների միասնական անվանացանկի (այսուհետ՝ Անվանացանկ) կոնկրետ գնման առարկան՝ 4-րդ մակարդակին համապատասխան և դրան համապատասխանող միջանցիկ կոդը (դասակարգիչ):

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Ընթացակարգի առանձին չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներից ոչ մեկը ներառված չէ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանում՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերով սահմանված է, որ տվյալ գնումն իրականացվում է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, ուստի Կենտրոնը ներկայացված բողոքով գտնում է, որ Պատվիրատուի կողմից Ընկերության գնային առաջարկը չհիմնավորված ցածր որակելը, հետևաբար նաև Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն լրացուցիչ հիմնավորումներ պահանջելը անհիմն է:

Ինչ վերաբերվում է «Մասնագիտական փորձառություն» չափանիշին, ապա Պատվիրատուն մասնակցի հայտը գնահատելիս պետք է առաջնորդվեր Կարգի 65-րդ կետով, այն է՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև հրավերի պահանջներին համապատասխան, այսինքն՝ ըստ չափաբաժինների:

Վերոհիշյալի արդյունքում, Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Կարգի 19-րդ կետով, օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետով, ՀՀ ֆինանսների նախարարի 896-Ն հրամանի 4-րդ կետով, ՀՀ ֆինանսների նախարարի 896-Ն հրամանի հավելված N 2-ի 3-րդ, 5-րդ և 8-րդ կետերը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 896-Ն հրամանի հավելված N 3-ի 2-րդ կետով սահմանված պահանջները:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Նույն հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

Կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:

Նույն ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությամբ՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է քննության առնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած բողոքը և «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Կենտրոնում 2016թ. մայիսի 10-ին ժամը 17:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.03.2016թ. թիվ 08-96 գրությամբ 17.03.2016թ. ժամը 17:25-ին Կենտրոնի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 2 որոշմամբ թվով 32 չափաբաժիններով 1-ին տեղը զբաղեցնող է ճանաչվել «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն, որից սահմանված կարգով պահանջվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև հրավերի 7.5 կետով նախատեսված գնային առաջարկի հիմնավորումները՝ առաջին տեղը զբաղեցրած բոլոր չափաբաժիններով, քանի որ մասնակցի առաջարկները նշված բոլոր չափաբաժիններով նվազ են նախահաշվային գնի 75 տոկոսից: Սակայն մասնակիցը չի ներկայացրել ըստ չափաբաժինների գնային առաջարկը հիմնավորող փաստաթուղթ, այլ ներկայացրել է ընդհանրացված նամակ, որը

չի ապահովում բոլոր չափաբաժիններով ցածր գնի արժանահավատությունը, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի ներկայացրած փաստաթղթերի բոլոր անհամապատասխանությունները հրավերի պահանջներին արձանագրել է և ներկայացրել է մասնակցին:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ 8.1.5 կետի պահանջների համաձայն՝ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Ըստ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի՝ գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Ի պատասխան «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 04.05.2016թ. 01/03.1/1768-16 ներկայացված գրության՝ Պատվիրատուն 10.05.2016թ. N 08-158 գրությամբ հայտնել է, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմքը համապատասխանում է իրականությանը և բխում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով, որի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար ***հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն***, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել ***հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Մասնակիցը հայտարարությամբ կարող է ներկայացնել փորձառության այնպիսի ծավալ, որը կբավարարի ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 65-րդ կետով նախատեսված նվազագույն պահանջներին (50 տոկոսի և 20 տոկոսի պայման), ինչպես նաև կարող է ներկայացնել ավելին և դրա արգելքը որևէ տեղ սահմանված չէ: Ցանկացած դեպքում Կարգը պահանջում է, որ մասնակիցը ներկայացնի իր իսկ կողմից արված հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները): Այսինքն՝ նվազագույն պայմանից ավել ծավալով աշխատանքներ հայտարարությամբ ներկայացնելու դեպքում, Մասնակիցը պետք է փաստաթղթերով հիմնավորի իր հայտարարությունը, հակառակ դեպքում Մասնակցի

հայտը ենթակա կլինի մերժման: Վերոգրյալ պայմանավորված՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է նաև այդ հիմքով:

Ըստ չափաբաժինների հայտը գնահատելու վերաբերյալ Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ տեղեկացրել է, որ բոլոր անհրաժեշտ դրույթները ներառել է Հրավերում՝ որը կազմված է գնուների պաշտոնական տեղեկագրում հրապարակված օրինակելի ձևին համապատասխան: Սակայն, «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին վերաբերվող տեղեկությունները իր հայտով և որակավորումը հիմնավորող փաստաթղթերով չի ներկայացրել ըստ չափաբաժինների: Պատվիրատուն չի կարող ներկայացրած տեղեկությունները (նախորդ ժամանակահատվածում պատշաճ իրականացված պայմանագրերի ծավալները) վերագրել այս կամ այն առանձին չափաբաժիններին, եթե դա չի նշել Մասնակիցը, ուստի նշված որակավորման չափանիշին չհամապատասխանելը վերաբերվում է ամբողջ հայտին:

Ինչ վերաբերվում է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընթացակարգը հայտարարելիս Մասնակցի գնային առաջարկը չհիմնավորված ցածր որակելու անհիմն լինելուն, ապա Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից: Գնման հայտը, դա գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված և հաստատված փաստաթուղթ է, որը բացառությամբ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքի, մնացած բոլոր դեպքերում, այդ թվում նաև նույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, պարունակում է գնման առարկայի առավելագույն գին:

Պատվիրատուն ընթացակարգը հայտարարել է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն, ուստի առկա է գնման առարկայի նախահաշվային գին և Ընթացակարգում Մասնակցից գնային առաջարկի պարզաբանում պահանջելը լիովին հիմնավորված է:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությանը կից ներկայացրել է նաև 14.01.2016թ. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտը, որտեղ առկա են Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի առանձին չափաբաժիններով գնման առարկաների համար սահմանված առավելագույն գներ:

Գնումների պլանում վերոհիշյալ Ընթացակարգի գնման առարկաները չներառված լինելու վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարի 10 հոկտեմբերի 2013 թվականի թիվ 896-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված կարգի 3-րդ կետի համաձայն՝ Գնման առարկայի «Միջանցիկ կոդը» և «Անվանումը» սյունակներում լրացվում է Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված գնումների միասնական անվանացանկի (այսուհետ՝ Անվանացանկ) կոնկրետ գնման առարկան՝ 4-րդ մակարդակին համապատասխան և դրան համապատասխանող «միջանցիկ կոդը»:

2. Անվանացանկի 4-րդ մակարդակի անվանումները արտահայտում են ապրանքային խմբեր, այլ ոչ թե կոնկրետ առարկաներ: Օրինակ՝ 33110000 «գրանցման համակարգեր և հետազոտման սարքեր», 33140000 «Բժշկական սպառման առարկաներ», 33180000 «ֆունկցիոնալ աջակցություն» և չեն արտահայտում ընթացակարգի հրավերներում որպես չափաբաժին սահմանված կոնկրետ գնման առարկաներ: Ընթացակարգում հնարավոր չէ գնման առարկայի անվանումները սահմանել այդպես, քանի որ մի քանի չափաբաժիններ կունենան միևնույն ընդհանրացված անվանումները, ինչպես նաև չեն համապատասխանի Ապրանքի իրական անվանմանը:

3. Ընթացակարգում Պատվիրատուն գնման առարկաներին վերագրել է իրենց իրական անվանումները: Դրանք Միաժամանակ վերաբերում են Անվանացանկի մի քանի չորրորդ մակարդակներում սահմանված ապրանքախմբերին, ինպես նաև որոշ դեպքերում ընդհանրապես բացակայում են Անվանացանկից: Օրինակ «ստենտ», «ստենտավորման հավաքածու» և «կորոնար ուղղորդիչ» արտահայտող ապրանքի անվանում Անվանացանկում գոյություն չունի, այն դեպքում երբ Պատվիրատուն ընթացակարգով հայտարարել է թվով 35 չափաբաժինների առանձնացված Ապրանքներ և դրանց հավաքածուներ: Ստացվում է որ Պատվիրատուն չի կարող ձեռքբերել այդ անհրաժեշտ ապրանքները:

Ելնելով Անվանացանկից, ինչպես նաև այն սկզբունքից, որ նույնիսկ Անվանացանկի 1-ին մակարդակի գնման առարկաները չեն արտահայտում կոնկրետ չափաբաժնի առարկան և ընդհանրացված ապրանքախումբ են ներկայացնում, օրինակ.

33141136 կոդով ներկայացվածը՝ «կաթետրներ», կամ 33141137 կոդով ներկայացվածը՝ «բալոնային կաթետրներ», Պատվիրատուն գնումների պլանում գնման առարկայի անվանումը ներկայացրել է մեկ ընդհանրացված անվանումով՝ «Բուժ. սարքավորումներ, գործիքներ, լաբորատոր ախտորոշիչ նյութեր և բժշկական նշանակության այլ ապրանքներ» և «33000000» միջանցիկ կոդով, որին կարելի է հնարավորինս լիարժեք վերագրել Ընթացակարգի բոլոր չափաբաժիններով նախատեսված Ապրանքները: Այսպիսով Պատվիրատուն ընթացակարգը հայտարարելիս գնման պլանում ներառել է գնման առարկաները այնքանով, որքանով դա հնարավորություն է տվել Անվանացանկը:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն գտնում է, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ՀՀ գնումների մասին օրենսդրության բոլոր պահանջների խիստ պահպանմամբ, և որ ընթացակարգը ապօրինի հայտարարելը հիմնավորված չէ:

Կենտրոնում 10.05.2016թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի վերաբերյալ Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ԳԲԽ-48/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-48/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ՝ (այսուհետ՝ Ընթացակարգ) 88 չափաբաժիններով («ստենտ դեղապատ», «կաթետր ախտորոշիչ», «կորոնար ուղղորդիչ», «կաթետր բալոն» և այլն):

2. Պատվիրատուի 10.03.2016թ. հաստատված գնումների պլանում՝ Ընթացակարգի 88 չափաբաժիններով նախատեսված գնման առարկաները, ներկայացված են ընդհանրական անվանումով՝ «Բուժ. սարքավորումներ, գործիքներ, լաբորատոր ախտորոշիչ նյութեր և բժշկական նշանակության այլ ապրանքներ», և մեկ միջանցիկ կոդով՝ 33000000, որը համապատասխանում է Կարգի հավելված 3-ով հաստատված՝

գնումների միասնական անվանացանկի՝ «Բժշկական սարքեր, դեղեր և անձնական հիգիենայի պարագաներ» բաժնի միջանցիկ կոդին:

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների՝ թվով 32 չափաբաժինների մասով, հայտ է ներկայացրել նաև «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 6 արձանագրությամբ՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն, թվով 32 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ն տեղ զբաղեցնող մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 23-ին ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրության 1-ին կետով կայացվել է որոշում, համաձայն որի՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն չի ներկայացրել ըստ չափաբաժինների գնային առաջարկը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև չի ներկայացրել՝ հրավերի 2.3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ «Մասնագիտական փորձառություն», որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ:

6. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 8.1.5 կետի համաձայն՝ ***հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է՝ ըստ առանձին չափաբաժինների***:

7. Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

- ***«Մասնագիտական փորձառություն»*** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում

կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) ***գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:***

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

(...)

8. «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) պայմանագիր(եր)***, ընդ որում դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:***

9. Պատվիրատուի կողմից՝ ԳԲԽ-48/16 բողոքի շրջանակներում, Կենտրոնին է ներկայացվել է 14.01.2016թ. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստավաձ գնման հայտը, որտեղ առանձին չափաբաժիններով ներառված են «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնման առարկաների առավելագույն գները:

4. ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 17.03.2016թ. ժամը 17:25-ին Կենտրոնի թեժ գծին ներկայացրած ահազանգը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.05.2016թ. բողոքը, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 10.05.2016թ. թիվ 08-158 գրությունը՝ կից ներկայացված փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի:

Կարգի 14-րդ կետի համաձայն՝ Գնումների պլանի ձևը և դրա լրացման ու հրապարակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը, իսկ գնումների միասնական անվանացանկի բացվածքը՝ ըստ թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի, խմբերի, դասերի և դասակարգիչների սահմանում և տեղեկատուում հրապարակում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելված 2-ով սահմանված գնումների պլանի լրացման կարգի 3-րդ կետի համաձայն՝ «Գնման առարկայի «Միջանցիկ կոդը» և «Անվանումը» սյունակներում լրացվում է Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված գնումների միասնական անվանացանկի (այսուհետ՝ Անվանացանկ) կոնկրետ գնման առարկան՝ 4-րդ մակարդակին համապատասխան և դրան համապատասխանող միջանցիկ կոդը (դասակարգիչ):

Կենտրոնի կողմից վերոհիշյալ ահազանգի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ վերոհիշյալ Ընթացակարգի առանձին չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներից ոչ մեկը ներառված չէ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանում՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Այսպիսով Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետով, Կարգի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված՝ գնումների պլանի լրացման կարգի 3-րդ կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 23-ին ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժելուն, ապա այս կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա

(դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից***, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:***

Պատվիրատուի կողմից Կենտրոնին ներկայացված 10.05.2016թ. N 08-158 գրությամբ ներկայացված հիմնավորումն այն մասին, որ Ընկերության հայտը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է ոչ բավարար, քանի որ Ընկերությունը 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց հետո չի ներկայացրել իր կողմից N3.1 հավելվածով ներկայացված հայտարարությամբ նշված՝ հրավերի պահանջները գերազանցող ծավալին համարժեք նախկինում կատարված պայմանագրեր, անհիմն է, քանի որ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատելիս՝ պետք է հիմք ընդուներ Կարգի 65-րդ կետով, ինչպես նաև հրավերով իր կողմից սահմանված պահանջները:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջները:

Պատվիրատուի կողմից Կենտրոնին ներկայացված 10.05.2016թ. N 08-158 գրության համաձայն՝ տվյալ ընթացակարգի գնման առարկա հանդիսացող ապրանքները հանդիսանում են Պատվիրատուի կողմից պարբերաբար ձեռք բերվող ապրանքներ, և Պատվիրատուն Ընթացակարգը հայտարարել է մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը՝ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է, այլ ոչ թե՝ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, երբ պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

Վերոհիշյալ գրությանը կից՝ Պատվիրատուն ներկայացրել է նաև 14.01.2016թ. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտը, որտեղ առկա են Պատվիրատուի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի առանձին չափաբաժիններով գնման առարկաների համար սահմանված առավելագույն գները:

Կենտրոնը, ուսումնասիրելով Պատվիրատուի վերը նշված գրությունը և կից ներկայացված գնման հայտը՝ հաստատված Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից, եկել է այն եզրահանգման, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը կարող էր Ընկերությունից պահանջել Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից ցածր ներկայացված գնային առաջարկի հիմնավորում:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետով, Կարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ և 65-րդ կետերով, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված՝ գնումների պլանի լրացման կարգի 3-րդ կետով սահմանված պահանջները, ուստի առաջարկում ենք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝		Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝		Մ. Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-48/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝		Տ. Գևորգյան